
«ԳԻՐՔ ԾՆՆԴՈՑԻ» ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆԱՑՄԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա. Ա.

Հատուկ անունները ժողովուրդների և նրանց մշակույթի պատմության կարևոր աղբյուրներից են¹: Յուրաքանչյուր ազգ ունեցել է անձնանունների իր համակարգը, որն արտացոլում է տվյալ ժողովրդի մշակույթի պատմության, մարդկանց հոգեբանության, նրանց սովորույթների ու հասարակական կյանքի յուրօրինակ բնութագրերը: Դրանք ոչ միայն անվանակոչում են անհատներին, այլև յուրահատուկ բանալիներ են բացահայտելու ժողովուրդների պատմական ճակատագրի, նրանց գաղթերի ու տեղաշարժերի նկարագիրը: Հաճախ ստույգ տարեթվի բացակայության պարագայում ճանաչողական իմաստ են ձեռք բերում պատմական անձնանունները:

Քանի որ անձնանունները պատկանում են միջազգային բառապաշարին և անցնում լեզվից լեզու կամ բարբառից բարբառ, ցանկացած լեզվի անունների ծագումնաբանական կազմը չափազանց խայտաբղետ է:

Շատ ժողովուրդների անձնանուններ փոխառված են այլ ազգերից, օրինակ՝ լատինական անձնանունների մեջ կան շատ էտրուսկական անուններ: Ֆրանսերենում գրեթե ֆրանսերեն անձնանուն չկա: Թուրքալեզու ժողովուրդների մեջ գերազանցում են ոչ թե թուրքական, այլ արաբական և իրանական, իսկ հայերի մեջ՝ իրանական, հունական և եբրայական ծագում ունեցող անունները:

Հայերի և եբրայեցիների շփումները մեզ տանում են մինչև Տիգրան Մեծի իշխանության տարիները: Երբ նա նվաճում է Պաղեստինը, բազմահազար հրեա գերիների բնակեցնում է Հայաստանում: Դարեր անց, այս փաստը ներկայացրել Փ. Բուզանդը իր «Հայոց պատմության» մեջ, որտեղ նկարագրում է պարսիկների արշավանքը Հայաստան. «Եւ յետ այսորիկ եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, եւ առին զնա, եւ կործանեցին զպարիսպ նորա. առին անտի զգանձս մթերեալս՝ որ կային, եւ գերեցին զամենայն քաղաքն: Եւ խաղացուցին ի յԱրտաշատ ի քաղաքէ ինն հազար տուն երդ Հրեայս, զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի Արշակունւոյ յերկրէն Պաղեստինացոց... Առնուին և զմեծ քաղաքն զԵրուանդա-շատ, և խաղացուցանէին անտի երդս քսան հազար Հայ, և երդս երեսուն հազար Հրեայ...»²: Հայաստան բերված արամեախոս գերիները եբրայերենը

¹ Բարսեղյան Հ. Խ., Հատուկ անուն, Ե., 1964, էջ 38:

² Բուզանդ Փ., Հայոց պատմություն, Ե., 1987, էջ 264:

պահպանում են եկեղեցական միջավայրում: Աշխարհի շատ ժողովուրդների լեզուների վրա երբայերենը գրական և կրոնական մեծ ազդեցություն է ունեցել: Տարբեր լեզուներով թարգմանված Հին Կտակարանի միջոցով երբայերենից բազմաթիվ բառեր և անձնանուններ փոխառվեցին բոլոր քրիստոնյա, մասամբ նաև մահմեդական ազգերի կողմից:

Քրիստոնեության մուտքից հետո հայ իրականության մեջ ևս լայն տարածում գտան Հին և Նոր Կտակարաններում հիշատակված երբայական անունները, որոնք, հունարենից և ասորերենից վերարտադրվելով կամ տառադարձվելով, մասամբ ասորական, մասամբ հունական ձևն ընդունեցին և հայկականացվեցին: Ըստ Հր. Աճառյանի՝ հայերն այն ազգերի թվին են պատկանում, որոնք ազդվել են երբայական քաղաքակրթությունից: Նա տարբերում է երբայերենից կատարված 98 փոխառյալ հատուկ անուն, որոնք հայերենում լայն տարածում ունեն: Երբայական բնագիր չունենալու պատճառով Աստվածաշունչը նախ ասորերենից, այնուհետև հունարենից է հայերեն թարգմանվել: Քանի որ հունարենը *g* և *z* հնչյուններ չունի, դրանք փոխառյալ անուններում դառնում են *u*: Միննույն անվան ասորական և հունական գուգահեռ ձևերից պահպանվել են հիմնականում հունականները՝ Աբեշաղով > Աբխողով, Եղիշաբեթ > Եղիսաբեթ, Յիշով > Յեսու, Շեմ > Սեմ, Շմշոն > Սամիսոն (հետագայում՝ Սամսոն), Աւարշիլ > Երուսաղէմ, Դկղայթ > Տիգրիս, Եղիշէ > Եղիսէ, Հաբէլ > Աբէլ, Մուշէ > Մովսէս, Շաուու > Սավուղ, Շմաւոն > Միմէոն (հետագայում՝ Միմոն), Շմուէլ > Սամուէլ (հետագայում՝ Սամվէլ), Ուոհայ > Եդեսիա (վերջին ձևերն իբրև տեղանուններ հանդիպում են հայ մատենագրության մեջ): Երկրորդ թարգմանության ժամանակ ասորական ձևերը մեծ մասամբ ջնջվում և հետագայում վերանում են: Ասորականներից, ինչպես տեսնում ենք, պահպանվել են Եղիշէ և Շմաւոն անունները: Հայերենում *g*, *z*, *h* հնչյունների առկայությունը, իհարկե, հայ թարգմանիչներին հնարավորություն կնձեռեր հարազատ մնալ Մուրբ Գրքի երբայական բնագրին, եթե այն ունենային: Ուզում ենք նշել նաև, որ որոշ երբայական անուններ էլ եվրոպական լեզուների՝ իսպաներենի, ֆրանսերենի, անգլերենի միջնորդությամբ են հայերենին անցել: Եղիսաբեթ անվան ձևափոխումներից ունենք Բգաբեյլա, Չապեյ, Լիգա, Բելա իգական անունները³: «Գիրք Ծննդոցում» վկայված որոշ անուններ մուտք են գործում փոխառու լեզվի համակարգ և կանոնակարգվում տվյալ լեզվի հնչյունական, ձևաբանական ու շարահյուսական օրենքներով, ինչպես նաև պատմական օրինաչափություններով: Այսպես, օրինակ՝ Յակոբ,

³ Տե՛ս Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Ե., 1951, էջ 55-64:

Յովսեփ անունները ֆրանսերենում Jacques, Joseph, ռուսերենում Яков, Яша, Иосиф համապատասխան լեզվին բնորոշ ձևերն են ընդունել:

Հայ իրականության մեջ «Գիրք Ծննդոցի» բազմաթիվ անուն-ներ սիրել և գործածել են հայերը: Այդ անունների գերակշռող մասն արական անուններ են: Հայերենում իգական սեռը մասնանշելու համար հատուկ ձևաբանական ցուցիչներ կամ ձևություններ չկան, ինչպես ռուսերենում և հունարենում են՝ Александр - Александра, Евгений - Евгения, Олег - Ольга, Թեոդորոս - Թեոդորա, Թեոդոս - Թեոդոսիա, Սահակ - Սահակիա. հետևաբար արական և իգական անունների տարբերակումը բովանդակային է: Սակայն երբեմն ո՛չ բովանդակությամբ, ո՛չ էլ քերականորեն միմյանցից չեն տարբերվում, որի արդյունքում ծնվում են, օրինակ, երկսեռ անուններ՝ Նուբար, Արշալույս, Երջանիկ, Նվեր և այլն: Ի տարբերություն վերոնշյալ լեզուների՝ հայերենում իգական անուններ են կազմվում պարսկերենից փոխառված -անյշ, -դուխտ, -ուհի հիմնական ձևությամբ, որոնք վերածվել են ածանցակերպերի՝ Արշանյշ, Սանդուխտ, Տիգրանուհի:

Ինչպես հնդեվրոպական որոշ լեզուներում, այնպես էլ հայերենում անուն խոսքի մասը պետք է սկզբնապես սեռի քերականական կարգ ունենար, սակայն գրաբարի ամենավաղ հիշատակարաններն անգամ դրա վերաբերյալ որևէ դիտարկում չեն արձանագրում, որի պատճառով քերականական սեռ ունեցող ասորերեն և հունարեն լեզուներից կատարված թարգմանությունների մեջ անհրաժեշտություն էր զգացվում դիմելու սեռակերտման արհեստական միջոցների: Այդ միջոցներին շատ են դիմում հատկապես հունարեն հեղինակները: Եվսեբիոսի «Եկեղեցական պատմության» թարգմանության մեջ թարգմանիչը բնագրի հասարակ անունների արական և իգական սեռերը տարբերակելու նպատակով դիմել է ասորական իգական ձևին՝ գործածելով -իթա(յ) ածանցը՝ հանգստարարիթայ «բժշկուհի»: Թրակացու քերականության թարգմանության մեջ նշվում են հատուկ անունների արական և իգական մասնիկներ փոխառյալ անուններում՝ որոշ դեպքերում սխալ ստուգաբանություններով: Ընդ որում՝ արական են համարվում -էն, -էդ, -իթ, -գէն, -էճ, -ակ՝ Մամէն, Մանուէդ, Մանիթ, Բարգէն, Մանէճ, Արտակ, իգական՝ -ին, -ոյշ, -ուհի, -ոց մասնիկները՝ Վարդենի, Մանանոյշ, Տրդատուհի, Վարդոց⁴:

«Գիրք Ծննդոցի» ուսումնասիրվող արական անունների թիվը հասնում է մինչև 300-ի: Էլ-ով կազմություններն անտարակույս արական են, որովհետև -էլ-ը երբայերեն նշանակում է «Աստված», օրինակ՝ Բամայէլ՝

⁴ Տե՛ս Ջահուկյան Գ., Հին հայերենի հոլովման սխստերը և նրա ծագումը, Ե., 1959, էջ 146:

նշանակում է «լսումն Աստծո», Մամուլ էլ՝ «Աստված լսեց», Մանուկ էլ < էմանանուկ է «Աստված է մեզ հետ»։ Ի տարբերություն արականների՝ իգական անունները խիստ սակավաթիվ են։ Շուրջ 25 իգական անուն կա, որից 14-ը -ա-ով վերջացող անուններ են՝ Աղբա, Ջելփա, Եւա, Լիա, Մեղբա, Նոյեմա, Շուա, Ռեբեկա, Ռեւմա, Սարա, Սէլլա, Քետուրա և այլն։ Ենթադրվում է, որ սրանք հունարենի իգականի կազմության եղանակով են տառադարձված կամ թարգմանված։ Թե՛ արական և թե՛ իգական անուններում պասիվ գործածություն ունեցողներն ավելի շատ են, քան կենսունակ արմատներով առավել հիշատակություններ ունեցած անձանունները, որոնց սեռային տարբերակումը բովանդակային է։

«Գիրք Ծննդոցն» ուշագրավ է նաև հատուկ անունների ստուգաբանության տեսանկյունից։ Դրանց ծագման վերաբերյալ դիտարկումներն իրենց տեսակի մեջ եզակի են և հավելյալ քննության կարոտ։

Հատուկ անունների ստուգաբանության ճշգրտությունը հեշտ չէ ապահովել, քանի որ հաճախ դրանց իմաստները մթազնած են լինում։ Բազմաթիվ եբրայական անուններ չեն ստուգաբանվել և աստիճանաբար գործածությունից դուրս են մղվել։ Ստորև ներկայացնում ենք հայերենին մերված անունների ստուգաբանությունները Սուրբ Գրքում։ Օրինակ՝ ...Եւ զանուն երկրորդին կոչեաց Եփրեմ, զի ասէ՝ թէ Աճեցոյց զիս Աստուած յերկրի տառապանաց իմոց։ Եւ յետոյ եկն էլ եղբայր նորա, յորոյ ձեռին կապեալ էր զկարմիրն, եւ կոչեաց զանուն նորա Ջարա (39)։ ...Քանզի մեռաւ, կոչեաց զանուն նորա Որդի վշտաց իմոց. եւ հայր կոչեաց զնա Բենիամին (36)։ Եւ մեռաւ ...դայեակն Ռեբեկայ, եւ թաղեցաւ ի ներքոյ Բեթելայ ընդ կաղնեան. եւ կոչեաց զանուն նորա Կաղնի սգոյ (35)։ ...վկայ է բլուրս այս, վկայ է արձանս այս. վասն այնորիկ կոչեցաւ անուն բլրոյն Վկայութիւն (32)։ Եւ եկն էլ որդին անդրանիկ շառագոյն ամենին՝ իբրեւ զնորթ թաւ, եւ անուանեաց զանուն նորա Եսաւայի. եւ ապա էլ եղբայր նորա, եւ ձեռն նորա ունէր զգարշապարէ Եսաւա. եւ կոչեաց զանուն նորա Յակոբ (23)։ Եւ կոչեցես զանուն նորա Իսմայէլ, զի լուաւ Տէր տառապանաց քոց (14)։ Եւ կոչեաց զանուն նորա Յովսէփ. ասէ. Յաւելցէ ինձ Աստուած որդի միւս եւս (24)։

Արական անունների մեծ մասը կազմությամբ պարզ և բաղադրյալ են։ Դրանք -էլ «աստված» նշանակությամբ բառարմատով և -աս, -էս, -իս, -ոս, -ոն, -ան հնչյունակապակցություններով վերջացող անուններ են՝ Թովբէլ, Յովբէլ, Հաբէլ, Իսմայէլ, Կամուէլ, Մաղաղայէլ, Մայիէլ, Անաքիս, Թիրաս, Կաղէս, Շմաւոն, Չաբուղոն՝ «բնակություն, բնակարան», Ռիսոն, Կայնան, Քաղան և այլն։ Այս անունները հայերենում գրեթե կիրառական չեն։

«Գիրք Ծննդոցում» խիստ հաճախադեպ են տեղանուններից և անձնանուններից -ացի, -եցի, -ցի անձնանուններով կազմված երկրադարիչ կամ բառակապակցական և միահիմք անձնանուններն ու ցեղանունները: Հայկական իրականության մեջ անձի անվան բանաձևում հայրանվանը զուգահեռ առկա էր նաև տեղանվանական բաղադրիչը: Այս կառույցները մականունների մի առանձին տեսակ են կազմում, որ տվյալ երկրի բնակիչ լինելը կամ որևէ ցեղին պատկանելն են մատնանշում՝ Սամարացի, Եգիպտացի, Սոդոմացի, Գոմորացի, ցեղանուններից՝ Փղշտացի, Քանանացի, Իսմայելյացի և այլն: Վերադիր անուններով բառակապակցական կազմություններից են՝ Եղիազար Դամասկացի, Եփրոն Քետացի, Եզովմ Խեւացի, Ազար Եգիպտացի և այլն: «Եւ Քանան ծնաւ ...զՔետացին եւ զՅերուսացին, եւ զԱմովրհացին... եւ զԽեւացին, եւ զԱմինացին եւ զՍամարացին եւ զԱմաթացին. եւ յետ այնորիկ սփռեցան ազգք Քանանացւոց» (9):

Ի տարբերություն արականների՝ սակավադեպ կիրառություն ունեն իգական անունները, որոնք կազմությամբ հիմնականում միահիմք են՝ Եւա, Թամար, Ռեբեկա, Սառա, Նոյեմ, Ռաբել...

Այս անունները յուրահատուկ են նաև իրենց թեքման առանձնահատկությամբ: Ենթարկվում են առավելապես ա արտաքին, ի, մասամբ նաև ու և ո հոլովման՝ Ղեի - Ղեւայ, Մասեկ - Մասեկայ, Ղամէք - Ղամէքայ, Կայնան - Կայնանայ, Գամեր - Գամերայ, Լիա - Լիայ, Զելփա - Զելփայ, Շաւա - Շաւայ, Յուդա - Յուդայ, Ադամ - Ադամայ, Ենեվք - Ենեվքայ, Ղովտ - Ղովտայ (չստուգաբանված), Սէմ - Սէմայ («անուն», Նոյի անդրանիկ որդին, որից ծագել են բոլոր սեմական ժողովուրդները). Բաթուել - Բաթուելի, Եփրեմ - Եփրեմի, Յաբեթ - Յաբեթի («ընդարձակել» ըստ Ս. Գրքի, Նոյի կրտսեր որդին, հայ ազգի նախնին՝ Յաբեթեան տոհմ), Ռուբէն - Ռուբէնի, Սառա - Սառայի, Աբրամ - Աբրամու, Քանան - Քանանու, Քետացի - Քետացույ և այլն: Կան անուններ, որոնք ունեն գրության տարբեր ձևեր՝ Աբրամ - Աբրահամ, Սառա - Սարա, Ենոք - Ենովք, Աբեմելէք - Աբիմելէք. Թորել - Թովրել, և հոլովական զուգաձևություններ՝ Լաբանայ - Լաբանու, Յովսեփայ - Յովսեփու, Ռաբելայ - Ռաբելի և այլն:

Քաղաքական և մշակութային կյանքում հայոց ավանդույթներն ավելի ցայտուն են դառնում իրենց անուններով: «Գիրք Ծննդոց» գրքում գործածված անուններից սերնդեսերունդ փոխանցվել և կենսունակ են դարձել հայկական իրականության մեջ Ասքանազ (հնում գործածական չի եղել. վերջերս այն վերակենդանացավ իբրև հայերի՝ Ասքանազյան ազգի անվանակիր), Ադամ «կենդանի էակ», Աբրահամ «հայր ազգաց կամ հայր բազմութեան», Բենիամին «որդի աջոյ», Եղիազար «աստված» և

«օգնություն» բառերից, նշանակում է՝ «Աստված իմ օգնություն», Բսահակ-Սահակ, «ծաղր կամ ուրախություն», Յակոբ «խաբել, զարշապար», Յովսէփ «աստվածաբնակ» (ըստ Հր. Աճառյանի, Ծննդ.՝ «յաւելցէ...»), Եփրեմ «պտղաբերել», Շմաւոն «լսող», Ռուբէն - բէն «տեսնել» և ուր «որդի» (տե՛ս որդի): Ռուբէն անունը գործածվել է ԺԱ դարից և կենսունակ է ցայսօր: Սրանից է Ռուբինեան ազգանունը, որ մեր թագավորական հարստություններից չորրորդի անունն է և այլ անուններ: Բզական անուններից այսօր կիրառական են Եւա, որ նշանակում է «կյանք», Թամար՝ «արմավենի», Լիա՝ «հոգնած, վաստակեալ» (1 անգամ անթվական հիշատակարանում), Ռեբեկա՝ «կապել», Սառա՝ «իշխանուհի», փղք՝ Սառիկ, Նոյեմի՝ «քաղցրություն իմ» կամ Նոյեմզար, Նոյ նահապետի կնոջ անունը, և այլն: Այս անունները հայկականացվել և մի շարք ազգանունների ծնունդ են տվել՝ Ադամյան, Աբրահամյան, Եղիազարյան, Բսահակյան, Սահակյան, Հակոբյան, Հովսեփյան, Սառիկյան և այլն:

Աշխարհի բոլոր քրիստոնյա ժողովուրդների համար Աստվածաշունչը, ի մասնավորի «Գիրք Ծննդոցի», եղել և մնում է անձնանունների հարուստ շտեմարան: Փոխառված այդ անունները հաստատվում են փոխառու լեզվի համակարգում՝ ձեռք բերելով տվյալ լեզվին բնորոշ հնչապատկեր և տառադարձում: Դրանք ենթարկվում են վերջինիս քերականական օրենքներին, ինչպես նաև ազգային ավանդույթներին, օրինակ՝ Ենովք - Ենոք, Բսահակ - Սահակ, Նոյեմա - Նոյեմ: «Գիրք Ծննդոցի» շուրջ երկու տասնյակ անուններ մերվել են հայոց հատկանվանացանկում, և նրանց օտար ծագումն արդեն մթազնել է և վերականգնվում է միայն գիտական տարժամանակյա վերլուծության ժամանակ:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ երբայական քաղաքակրթությունը և մշակույթը հայերենի անձնանունների համա-կարգում նոր որակ են ստեղծում՝ պայմանավորված և՛ լեզվական, և՛ արտալեզվական գործոններով: Երբայերենից ժառանգված և հայկականացված այս անունները համագործածական են հայերենի զարգացման բոլոր փուլերում, և կարծես ամբողջանում է «Գիրք Ծննդոցի» անձնանունների հայկականացման պատմական ընթացքը:

ИСТОРИЧЕСКИЙ ПРОЦЕСС АРМЕНИЗАЦИИ АНТРОПОНИМОВ ИЗ «КНИГИ БЫТИЯ»

ХАЧАТРЯН А. А.

Резюме

Для всех христианских народов Библия и, в частности, «Книга Бытия» всегда были богатым источником антропонимов. Заимствованные имена вошли в лексику разных народов, подчиняясь фонетическим и грамматическим особенностям данного языка. В армянском языке используется более двух десятков имён из «Книги Бытия». Подвергнувшись арменизации, они обрели «гражданство» в армянской антропонимической лексике.

**THE HISTORICAL PROCESS OF ARMENIZATION OF
ANTHROPONYMS FROM “GENESIS”**

A. KHACHATRYAN

Abstract

The Bible and in particular the book of Genesis have always been a rich source of personal names to all Christian nations. Borrowed names found their place in the onomastic vocabulary of various peoples undergoing phonetic and grammar changes of the respective language. More than two dozen names from Genesis are used in Armenian. Having undergone respective changes, they enriched Armenian anthroponemic word stock.